դունք 'ի բովանդակ մարմին նորա, և չարաչար մահուամբ փչեաց զհոգին, վասն 'ի Քրիստոս յանդգնութեանն, որպէս պատմեն Յովսեփոս և մերս Խորենացի։

Յետ թագաւորելոյ Արքեղայոսի 'ի Հրէաստան փոխանակ հօր իւրոյ Հերովդի, դարձաւ մանուկն Յիսուս ընդ ծնողացն յԵգիպտոսէ 'ի քաղաքն Նազարէթ. և յերկոտասան ամաց հասակին իւրոյ՝ եկ ընդ ծնողացն ըստ սովորութեան յերուսաղէմ 'ի տօնի զատկին. և փայլեցոյց ընդ նշոյլս ճառագայթից Աստուածեղէն իմաստութեանն 'ի Տաճարին առաջի դպրաց, եւ ապա իջեալ գնաց ընդ նոսա հնազանդութեամբ, և զարգանայր հասակաւ լի իմաստութեամբ և շնորհօք։

Արքեղայոս ամբաստանեալ առաջի կայսեր՝ անարգարար արտաքսեցաւ 'ի սահմանաց թագաւորութեան իւրոյ և դատապարտեցաւ յաքսորս։ Եւ զկնի այլոց, առաքեցաւ Պիղատոս պոնտացի 'ի Տիբեր կայսերէ դաւառապետ Հրէաստանի. սա եմոյծ ծածկաբար 'ի գիշերի զպատկեր կայսերն յերուսաղէմ։ Եւ յետ երից աւուրց դղրդեցաւ քաղաքն ողջոյն, դիմեցին առ նա Հրեայք 'ի Կեսարիայ, բազում պաղատանօք հայցէին չպղծել զքաղաքն, մանաւանդ զօրէնս իւրեանց։ Ցընդդէմ դառնալն Պիղատոսի՝ յանձն առին մեռանիլ 'ի վերայ հայրենատուր աւանդից քան տեսանել զանարգանս կրօնից։ Զարմացեալ Պիղատոսի՝ ետ բառնալ զպատկերն 'ի քաղաքէ անտի։ Սակայն զգանձս տաճարին, զոր պատարագն կոչէին, ծախեաց 'ի ջրէջս ջուրց, որ տայր բերել 'ի հեռաստանէ (1). դրդռեալ Հրէից վերստին յարուցին աղմուկ չիմոթի, մինչեւ համարձակ աղաղակել յերեսս նորա. այլ նա խորամանկութեամբ իւրով զբազումս 'ի նոցանէ բրօք ետ կոտորել չարաչար։

Իսկ յառաջընթաց կարապետն Փրկչին սնաւ յանապատի անդ՝ մինչ ցլրումն երեսներորդ ամի հասակին՝ սպասաւորեալ 'ի հրեշտակաց։ Եւ 'ի հնգետասաներորդի ամի

---

(1) Զոր ժամանակ հեռի յԵրուսաղէմէ յարեւմտից հարաւոյ, Աբրոպ կոչեցեալ տեղւոյն, որոյ հին մնացորդ Ճանապարհին ցարդ ուրեք ուրեք երեւին 'ի Ճանապարհին, այժմ ցանկան զոյս ջուր բերել յԵրուսաղէմ, որ բազում ծախուց պէտս ունի։